

վրայ 80/0 մաքսի տուրքը պիտի վերնայ՝ իրքե ֆրասաբեր վաճառականութեան:

11. Տրոց արդարութեամբ հաւաքման համար միջոցներ ձեռք պիտի առնուին, և օսմ: պարտուց վճարումը կարգադրելու համար յանձնարումը մը պիտի դրուի:

Ասոնք թէպէտ պաշտօնապէս Բ. Դրան ներկայացեալ պայմաններ չեն համարուիր, բայց որովհետեւ յիշեալ տեսակը Անդղիոյ կառավարութեան ներշնչութեամբը գրուած ու հրատարակուած է, ուստի և ասոնք ալ կրնան բոտրաւականին լոյս մը տալու ծառայել թէ Անդղիա Ինչչայման ներով կ'ուզէ և մտադիր է թուրքիոյ խնդրած փոխառութիւնը տալու, եթէ ասի իրօք փոքր Ասիոյ բարենորոգմանցը պիտի ծառայէ:

Թայմիլ թղթակիցներէն մին, կիւմիւրքինայի և իւր բնակչացը վրայօք գրած մէկ թղթակցութեանը մէջ, առ հասարակ տաճիկ ժողովրդոցը նկատմամբ հետեւեալ շիտորոշութիւնները կընէ.

«Տաճիկ ժողովրդեան գրեթէ մեծ մասը, կըսէ, երկրագործութեամբ կը բաղուի զի վաճառականութեան այնքան մեծ յարմարութիւն մը չունենալով, սորա գոնաւորութիւններէն ու ներդրութիւններէն կ'իւրացի:

«Տաճիկաց հին մարդիկը զբոսաւոր և արհամարհոտ աչօք կ'նային վաճառականութեան վերայ, զի ասի բոյններուն յատուկ գործ մը կ'համարին Այս բանը կերպիւ մը տաճիկաց բնաւորութիւնը գովելու կրնայ նպաստել բոտ ոմանց, զի հիմակուան ժամանակս մինչև որ սուտ խօսել ու մարդ խաբել չըլլայ՝ վաճառականութիւնն ու առևտուրը չգառնարու Ուստի պատիւ և արժանիքը գիտցող հին տաճիկ մը այս բանն իրեն անարժան համարելուն համար, տակէ կ'ըզուի ու հետեւի կ'իտախի:

«Իսկ ցաւալի բանը այն է թէ՛ նայն իսկ այդ բանին հակառակ, իսկ մը հին տաճիկներ իրենց զաւակները կառավարութեան պաշտօններու մէջ կ'իւթնեն, ուր արժանիք և ուղղութիւն պահելը շատ դժուար է: Հին տաճիկները տասանորդի վարձակալութիւն ալ ընելէ ետ չեն կենար, մինչդեռ վարձակալութիւնը անթիւ գեղծմունքներով լեցուն հաշակուած է:

«Տաճիկներն կառարկեն թէ շատ անգամ խարդախ ու խաբերայ վաճառականաց հանդիս գիպելուն համար վաճառական ըլլալու այնքան փափաք և մի-

տում չունին, բայց ըստ իսպին պէս կերելի թէ՛ տաճիկաց վաճառականութեան յարգ չընծայելուն գլխաւոր պատճառն է՝ վաճառականութիւնը տիրող ցեղին անձնասիրութեանն ու հպարտութեանը դպիլը, մէկ մ'ալ դիւրին և հանգիստ կեանք մ'անցնել, ու զենին, որն որ հարկըստ տարիներէ ի վեր այլ ևս ազգային բնաւորութիւն մը դարձեր է:

Ասով հանդերձ կան տեղեր որ տաճիկներն փերեղակութիւնն ու խանութպանութիւնն ալ կընեն, բայց յունաց ճարպիկութիւնը չեն կրնար ունենալ, Թոյն մը խանութպանութեանէ քիչ մը ստակ չահելով աւելցնելուն պէս՝ իսկոյն գործառնութեան շրջանակն ու ասպարէզը կընդարձակէ, և օր մ'ալ կ'նայիս որ մեծ Պանքըթը կամ վաճառականութեան իշխան մը եղեր է, իսկ տաճիկներն այս կերպ յառաջադիւնելու փափաք և նկրտում մը չունենալով, գործի վրայ մտածեն ալ, դարձեալ անանկ օր մը մեծ վաճառատուն մը բանալու, իսկ մը գրագիրներ ղենելու, հակերով վաճառք կամ ապրանք բերելու պէս բաներ բնաւ մըտքէ չեն անցնելու (Անշուշտ փոքրամասն բացառութիւններ կ'են, նալն ալ մոռնալու չեմք):

«Տաճիկ մը քանի մը ստակ մէկ կողմ դնելուն պէս, «գըրամը կ'երթայ ինչքը կ'մնայ», հին առածին համեմատ, գըրամը կ'տայ արտ կամ հող կ'առնէ, խանութն ալ մէկի կ'իջողու, և աշխարհային երջանկութիւնն է բաւելով անգործ և անդորր կեանք մը կ'անցնէ, իթէ աղէկ ազարակ մ'առեր է եւ՝ շատ անգամ հոն կ'առանձնանայ, գետինը գիւղացւոց վարձու կ'տայ, և կամ իր հաշուին բանեցնել կ'տայ, իսկ վարձու տալը աւելի դիւրին լինելով՝ ասի նախամեծար կ'համարէ: Հողատէրը գետինն հետ կ'ենդանի և գործիքներն ալ կըտայ միտոնդ, գիւղացին ալ բերքը հնձելով տասանորդը տալէն ետքը, մնացեալ բերքը կէս առ կէս իր և հողատիրոջ մէջ կ'առան, Այս սովորութեանը հետեւանք, գիւղացիք գրեթէ հող չունին, ունեցող ալ ըլլայ իսկ՝ չնչին բան մ'է ունեցածնին:

Տաճիկներն օտար լեզուի ալ յարգ չեն տար, Գըրմի պատերազմէն առաջ եւրոպական լեզուաց ուսուցիչներէն հմուտ պաշտօնավարներն մինակ Արտըգործ պաշտօնատունը գտնուելով, ասոնց ալ մեծ մասը քրիստոնեայ էին: Իսկ այժմ կուսակալաց, Միւթիսարքներու և Գայմազաւներուն մէջ լեզուա-

գէտ շատեր կ'տեսնուին, իսկ եւրոպացի ճանքորդներ ինչ ինչ ներմուծեալ փոփոխութեանց կամ նորաձեւութեանց վրայ ցաւ կ'այտնեն, ինչու որ հին տաճիկներն լուրջ և ծանրաբար լուի ըլլալով, ունեցած ինչ ինչ թերութիւններուն հակառակ, կապի պէս եւրոպացիի նմանող երիտասարդներէն աւելի՝ բուն եւրոպացւոց վրայ համակրութիւն ունին, թերեւ ըլլայ օր մը որ իսկ մը օսմ: պաշտօնավարներ եւրոպացիի նմանելու կապկութեանէն ետ կ'ենան:

«Մեզք չհամարուի մեզ թայմիլ թղթակցին սոյն նամակը հրատարակելիս, զի վազմենէ առաջ հրատարակած է:

Ա Չ Գ Ա Յ Ի Ն

Տէյլի-Նիուզ վերջին թերթերէն մէկուն մէջ, իւր Կ. Պոլսոյ թղթակցին յով. 4/16 թերթականութեան մէջ նամակը կ'հրատարակէ, յորում կըսէ թղթականիցը թէ «Հայաստանի մէջ եւ փոքր-Ասիոյ ներսերը շարունակ մանր ապստամբութիւններ ելնելու վրայ են, որք եթէ կանոնաւոր և ճարտարութեամբ առաջնորդուին, կրնան Սուլթանին կառավարութեան վտանգաւոր լինել:

«Հայերը, կըսէ, փոքր-Ասիոյ ամենէն նրբամիտ և ընդունակ ժողովուրդն են, իսկ վերջին տարիներուն մէջ ամեն տեղ հարստահարութիւն կ'ընեն քըրդաց և այլոց ձեռքէն:

«Հայոց Պատրիարքարանը ըստ իւր պարտականութեան՝ իր ժողովրդին ներդրութիւնները ներկայացոյց Բ. Դրան, բայց դարման մը չկրցաւ ձեռք ձեռքել ըսին իրեն առարկելով թէ ինչու համար եւրոպական տէրութեանց Յիշատակագիր մը զրկեր է տղա հարստահարութեանց համար:

«Ասոր վրայ Հայոց Պատրիարքը հրաժարական տուաւ, մանաւանդ երբ տեսաւ որ բուն տարկեալ Ձէյթունցի Հայոց համար իր տուած երաշխաւորութիւնը չբռնուիր: Ձէյթունցիք ամբաստանուած էին Գօզան օղլուի ապստամբութեան մասնակցելու յանցանք: Իսկ Հայերն իրենց վարմունքովը յայտնեցին թէ զրպարտութիւն մ'էր դա իրեն համար, ալ բուն պատճառը սա՛ էր թէ Դուռը Գօզանի ապստամբաց բան մ'ալ չկարենալով ընել, բան մ'ըրած ըլլալու համար Ուլիոյ վրայ գործ կ'ըրկէ և տեղւոյն գըրխաւոր բնակիչները կ'ձերբակալէ, որք ապստամբ չէին, եւ զանոնք կ'պատժէ փոխանակ Գօզանցիներուն:

«Իւ որովհետեւ Պատրիարքն ալ անկարող կ'գտնուէր այդ բանտարկելոց օգնել և իւր ժողովրդեան կրած տառապանքըն ու կեղեքմանցն առաջը առնուլ, ուստի և հրապարակաւ յայտնեց թէ ինքը պատտօնաւորաւ չէ անոնց վիճակին, եւ հրաժարագիրը Դուռը զրկեց, ըսելով թէ շատ մը խոստումներ ստացած է կառավարութեանէն իր գանգաւորները քննելու, իսկ ցարդ ունէ փոխարինութիւն մը չէ կրցած ստանալ:

«Մինչև իսկ Վեհ. Պալատին բրած խոստումնցն հակառակ, Հայերը դեռ կ'ենդուն Բրդերէն ու Ձէրքէզներէ, որոց դէմ հայերն պաշտպանելու համար արգարութիւնն ի գործ չդրուիր:

«Դուռը չէ ընդունելու Հայոց Պատրիարքին հրաժարականը և ետ դարձուցեր է, իսկ Պատրիարքը ցարդ կ'անդէ իր հրաժարականին վրայ, մինչև որ ապագային համար հաստատ ապահովութիւն մ'ստանար:

Ընդհ. Ժողովը երէկ գուժարուելով ի Ղալաթիա, աստեանական նախնական գործողութիւններէն յետոյ, Օրակարգին՝ կեդր. վարչութեան յառաջիկայ տարւոյ Պիւճէին վիճարանութիւնը նորէն ձեռք առաւ, և հաստից մէկ քանի գաւառներուն վրայ վիճառներէն յետոյ, շարունակութիւնը յաջորդ նիստին թողուցաւ:

ՇԲԵՂ ՊԱՐԱՀԱՆԴԻՍ

Ի ՆՊԱՍՏ
Աւագնէ Հիւանդանոց Հայոց
7/18 փետր. 1879
Չորեքշաբթի գիշեր ժամ 4 1/2
ԹԷԼՏՕՐԱՏՕ Ի ԲԵՐԱ

- ԱՆԳԱՄԲ ՅԱՆՁՆԱԾՈՂՈՎՈՅ
Վսեմ: Մարտտ Սիմօն պէյ
Նախագահ
Մեծ. Մանուկեան Սէնէքէրիմ
Էֆէնտի Դեր-Նախագահ
» Եուսուֆեան Տիգրան Էֆ.
Քարտուղար
» Նորատունկեան Յարութիւն
Էֆէնտի Գաւձապետ
» Մէրեթ-Գուլի Յարութիւն
Էֆէնտի Գննիչ
Մեծ. Բարաղամեան Տիգրան Էֆ.
» Գալլըճեան Պապիկ
» Գալուկէօղեան Գրիգոր
» Գրիգորեան Ռուբէն
» Էֆենդեան Գարգիլ
» Թաշճեան Սարգիս
» Թիւլպէնտեան Անտոն
» Կիրտաղեան Աւետիս
» Կիւմիլէրտեան Ռուբէն
» Ղազարոսեան Սահակ
» Միրասեան Պետրոս
» Յովսէփեան Կարապետ

Մեծ. Շահապետան Եղիա էֆ.
Վսեմ. Կարապետ »
Մեծ. Պէլլէրեան Եղիա »
Սէրմիլէճեան Գրիգոր »
Սերոբեան Յարութիւն »
Վսեմ. Սէրվիլէն »
Մեծ. Սըփաճեան Սարգիս »
Վսեմ. Սուրենեան Յովհաննէս »
Մեծ. Տէրունեան Յակոբ »
Փէնտըղլեան Յարութիւն »

—Անկերպող եմք որ վերջին աւուրց նմանօրինակ դէպքերու մէջ քանիցս իւր վեհան. ձէն և բարեօրինական զգացմանց փորձը ցոյց տուող հասարակութիւնը՝ այս անգամ ևս ամենէն աւելի պիտի փութայ կարեկցութեան արժանի յիշեալ Ս. Փրկչի Հիւանդանոցի նպաստին և օգնութեանը աջակից, հաղորդ և մասնակից գտնուելու :

Կիմանամք թէ այս եւլ. գիշեր Հոգիւմ. աղագոյնոց Ս. Յարապ հիւանդանոցին ի նպաստ Հիւորատոյի սրահը տրուած պարահանդէսէն ընդամենը 600 սակւոյ հասոյթ մը գոյացեր է :

ԱԶԴ

Սեփաստիոյ նորակամը Արծրունեաց բնկերութեան ընդհ. ժողովը պիտի գումարի յառաջիկայ կիրակէ՛ 4 փետր. ժամ 6 ու կէսին Ղալաթիոյ վարժարանը, օրակարգ ունենալով.

1. Ընտրութիւն դործագիր ժողովոյ :

2. Ընթերցումը բարեփոխեալ կանոնագրի :

Կհրաւիրուին ըստ բաժանորդները ներկայ գտնուելու սոյն կարեւոր նստին, կատարելով իւրեանց պարտականութիւնն :

Մնամք էրն. երն.

Արծ. Ընկ. Ընդհ. ժողովոյ

Ատենադպիր Ատենապետ
Օ. Զաւարթեան Ա. Տ. Թովմատեան

ԱՅԼԵՒԱՅԼՔ

Դաւրէժէն կհեռագրենք Ս. Թէնտարտի թէ ֆոթուրի վիճակէն ու քաղաքը յնվ. 16/28ին Պարսկաստանի յանձնուեր է, իսկ տաճկներն պիտի չսրուեն. կեն գրաւի կիրճերը, մինչև որ սահմանագիծոց խնդիրը վերջնական որոշում մը ստանայ :

—Վիեննայէն քաջուած հեռագիր մը կըսէ թէ. Ելէզլիկ Հոյժթէյնի նկատմամբ Ռուսկայի գաշնադրին ճիշդ յողումովն եղծմանը Ա. օտորիոյ տուած հաւանութեանն ի փոխարէն, Գերմանիա ալ խօսք տուեր է ունէ միջամտութենէ ետ կհնալ եթէ Աւստրիա մինչև Սերանիկ յառաջ քալէ :

—Կաղզանէի տնօրէնութիւնը ինչուելով, այդ պաշտօնը Ռերայի Զ. Շըշանակի թաղապետ :

տնութեան ձեռքը պիտի յանձնուի :

—Մայիս կողին ալ 21 օր ֆարանթինա հաստատուեր է Սև ծովէն և թուրքիոյ նաւահան. գիտնեանքն գացող նաւուց համար :

—Առջի օրը Եէտի գուլէ տաճիկ մը կառախուրք երեսուտեան, երբ սա չարժման մէջ էր, վար ինալով երկու ոտքերը իսխլախեցան : Անմիջապէս կտրեր են մարդուն ոտքերը :

—Թղթատարական վերատեսչութիւնը Եէնի ճամիի թըղթատան հասոյթը նենգուելու կտակած մուսնեալով, դադարեալ յանձնաժողով մը կազմելով, սորա խուզարկութեամբ բաւական մեծագումար գողցուած ստակ կգտնուի, և այդ գողցուածներէն մինչև ցարդ 260.000 զշի չափ գրամ ետ առնուեր է :

Զարմանալին սա է թէ՛ թղթատան մէջէն օտակ գողցող պաշտօնակալը՝ ապագային մէջ չպատուելու խոստմունքն առնեալէն ետքը գողցածներն ունէ մէկ մասը ետ դարձուցեր են, իսկ մնացածը շին ուղեր եղեր ետ ալ չմնաց ըսելով :

—Սերանիկէն քաջուած պաշտօնական հեռագիր մը կըսէ թէ անցեալները Տալը Տէրէ վիճակին մէջ թիֆօ պտտահելով, 3 ամսուան մէջ 250 հողի մեռեր են, այս օրերս ալ կիւմիւրիսոյի մօտերը Հիւմա քառուած հիւանդութիւնը ճարակեր է :

—Շարաթ օրը կըսէ փուշ, երեք հոգի Աշըր էֆէնտի խան Մեծ. կիւլպէնկեանց վաճառատունը գացեր են գորգ գնել, և իբր թէ սակարկութիւնը չը յաջողելով երբ մեկնել են, տեսնուել է որ սեղանին վրայէն 350 լիրա պարունակող տոպրակ մը աներիւնութեամբ է, իսկոյն օտարիկանութեան ծանուցուել, գաղտնի պաշտօնական հանուեր են վաճառատան գրադրաց հետ, և գիշերը Պէյօղլու խաղտարանի մը մէջ բռնուել է յիշեալ երեք ան. ձանց մէկը, որ արդէն այսպիսի գործերով օտարիկանութեան ծանօթ է եղեր : Մարդն այժմ դժուրակ բանտի մէջ է, բայց դեռ չխոստովանիր յիշեալ տոպրակը վերցուցած ըլլալին, և ընկերներուն ուր գտնուիլը Ռուսիկանութիւնը եթէ ուզէ կըրնայ երեւան հանել : Հարկ չը կայ ըսել, թէ այսպիսի դէպքեր կհրատարակուին ի զգուշութիւն այլոց :

ՀՆՈՒԱԳՐԱԼՈՒՐՔ

Լոնտրո 13 փետր.

Խորհրդարանին այսօր բացուեցաւ :

Ազնուականաց Խորհրդարանին մէջ Լորտ Պիքքենսֆիլտ հարցման մի պատասխանի յայտնեց թէ, անգղ. կառավարութիւնը պարտականութիւն առած էր Դրան 5000 անգղ. ոսկի վճարել տարին, կիպրոսի մէջ Պետութենէն գնած արքունի ստացուածոցը համար, հասութից յաւելուածէն վճարուելիք 100.000 ոսկիէն զատ :

Լորտ Պիքքենսֆիլտ ըսաւ նաեւ թէ՛ Աֆղանիստանի արշաւանքը իր նպատակին հասած է :

Պարէշ 13 փետր.

Արապ Թապեայի խնդրոյ մասին Ռուսիա կառավարկէ Ռումանիոյ օր իր գործերը Սիւլիսթէէն 2 քիլոմէթրօ ետ քաշէ, մինչև որ Երզնում մ'ըլայ այդ մասին :

Այս օրու հաւած

Լոնտրո 13.—Հորկց. Խորհրդարանը ծանոց որ վաղը հարցում մը պիտի ընէ թէ տաճկառուսական վերջին դաշնագրի ըր պաշտօնակալէս Անգղիոյ հաղորդուած է, և թէ կառավարութիւնը գեռ պինդ կըսէ՝ Սակիզարի մարգիզին այն յայտարարութիւնը թէ՛ թուրքիա չպիտի պարտաւորի ունէ պատերազմական տուգանք վճարել իր առջի պարտուցը կարգադրութենէն առաջ :

Սըր Նօրթքոթ ըսաւ թէ տարակոյս չկայ որ Ռուսք որոշեալ ժամանակին օսմ. երկիրները պիտի պարպեն, Սէր Հէնրի Լէյարտի գովեստ կարդալով, ցաւ յայտնեց որ իր վատաւողչութենէն հարկադրուած է պահ մը Կ. Պօլսէն հեռանալու :

Վիյուստը թէ ըսաւ, դործներն այն վիճակին հասած են, որ նորա բացակայութենէն անտեսութիւն մը չծագիր :

Լոնտրո 14.—Տէյլի Նիուզ հեռուեալ հեռագիրը կհրատարակէ. —Ռուսիա փոխարինութիւն ուզեց Ռումանիայէն, պահանջելով որ Արապ Թապեան անմիջապէս պարպէ, ապա թէ ոչ զինու զօրութեամբ պիտի գործէ, կկարծուի թէ տէրութեանց Խորհրդոյն վրայ՝ Ռումանիա զիջում պիտի ընէ :

Հորկց. Խորհրդարանը Պ. Պուրք յայտնեց թէ Յունաստանի խնդրոյն համար հկտ. 21ին Գաղղիա ունէ հեռագիր մը չէ կրկնել թուրքիոյ :

ԳՐԱՄԱԿԱՆ

Լոնտրո 14.—Բաց	12 1/2
Գոց	12 7/16
Բարիշ 13.—Բաց	12 45
Գոց	12 50
Պուրվար	12 50
Այս առաւօտ բացուեցաւ	14.02
Թղթադրամ	440.00
Բումէլի	50.75

ՎԵՐՁԻՆ ԼՈՒՐԵՐ

Գտրատաղի Նիքօլա իշխանը վեհ. Սուրբանին հեռագրաւ շնորհակալութիւն յայտնեց Բատկօրիցայի խաղաղութեամբ յանձնուելուն վրայ, և ապագային համար Բ. Դրան հետ հաշտ և բարեկամ մնալու մասին ապահովութիւն տուեր է :

—Անցեալները քաղաքական ամբաստանութեան մը պատճառաւ ձերբակալուելով Զմիւռնիայէն հոս բերեող օսմ. երեսփոխան Մէնէքշէլի զատէ Էմինէֆ. այս անգամ Սպարապետութեան դուռը պատերազմական ատեանին առջեւ դատի քաշուեր է, Զմիւռնիոյ կառավարութիւնը յիշեալ անձին դէմ իր ամբաստանագիրն և հասարակային իրաւանց փոխանորդներն հոս զրկած ըլլալով, Էմինէֆ. մինչև այսօր 3 անգամ ներկայացեր է ատեանին :

—Զաթալապի ամրութեանց մէջ տեղը սկսուած զինուորական երկպառուի ճանքուն շինութիւններն, օդ երունցրտութեան և դժուարութեանցը պատճառաւ, առայժմ դադարեցուցեր են :

—Երէկ առաւօտ ժամը 3ին մօտերը Խոսպիւղ Հալքօղլուի շուկային մէջ զինուորական համադրեցութիւն և քովերին ալ կախուած դայիներն ունեցող 3 անձինք Արնափուտի մը վրայ կ'յարձակին, և առանց միւս անցորդ մարդոց և մօտի խանութպաններուն ներկայութիւնը բանի տեղ զնելու, արձակ համարձակ և աներկիւղ կկողպտեն Արնափուտը և կառնեն կ'քալեն, կըսուի թէ մարդուն վրայ քանի մը հազար զրշի քարայն թղթադրամ կ'գտնուի եղեր :

—Պաթուկէն կ'ծանուցանեն թէ յայ. 25ին յիշեալ քաղաքը հրդեհ մը պատահելով 12 վաճառատուն և Աղիզիէի շոգեշաւուց ընկերութեան գրասենեակը այրեր է :

—Ռումանիա հրաման զրկեր է Տօպրուճայի բումէն զօրաց հրամանատար Աքսէլօս զօրապետին որ պատրաստ դանուի Ռուսաց յարձակմանցը զինու զօրութեամբ դէմ դնելու :

—Պուլկարիոյ աղագոյն զօրաց բանակը այժմ 30.000 է կը բաղկանայ, Սթամպուլ կհաստէ՝ պուլկարական զօրաց մէջ շատ մը փոխադր դասալիքներ կ'գտնուին եղեր :

ԱԶԴ.—Իսկիւտար Տաղ-Համամը թէլլալ Լուսիկի քով լաւ կաթնտու կին մը կ'գտնուի, Պէտք ունեցողը կրնայ իրեն դիմել :

ԸՆԴՀ. ՊԱՏՄՈՒԹԻԻՆ
ՀԱՄԱՌՈՑ

ԱՂԳԱՌԻՆ ԴՊՐՈՑԱՑ ՀԱՄԱՐ

Գրեց Հ. Գրիգոր Վ. Դուրիկեան

Միտք. Ուրախ

Վիեննա Միտք. Տպարան 1879

Բաժանդակութիւն.—Միտքն ու
Հոր Պատմութիւնը՝ մինչև մեր օրե-
քը հասցնող, համառօտ բայց կա-
տարեալ զէպքերն, մասնաւորապէս
ազգ. դպրոցաց գործածութեանը հա-
մար շինուած է։—Շատ հմուտ գր-
ութիւն է, ուր յայտնապէս կերեւի
գերմանական ճաշակն ու խորունկ
հմտութիւնը։—Սոքա արժէքն այնչափ
աւելի մեծ է, որչափ առաջիններէն
մէկն է ազգին մէջ, իբրև դոստա-
գիրք։ Վասն զի թէև կայ հատ մը
սակէ 30 տարի առաջ հրատարակ-
ուած, բայց, բաց անկէ, որ զուրկ է
բոլորովին հաստատուն գրութենէ,
չափ ընդարձակ բանուած է և Պատ-
մութեան հոգին ու ծածկը թող տա-
լով, աւելի զուարճալից ու զրոյց.
նետու միտ դրած է, որ պատմու-
թեան չէ՛ թէ էական, այլ երկրոր-
դական, մանաւանդ թէ երրորդական
մասը կ'ընդգրկեն։ Ուրիշ այլևայլ
տեղեր ու այլևայլ ժամանակ հրա-
տարակուած պատմութիւնները ամ-
բող չեն, մասնական են, ուստի իբ-
րև գործածութեան մէջ մտնելի
դրբեր, հատարակութեան ձեռքը
զեռ չեն կրնար արուել։—Ուր թո-
ղունը որ մատենագիրը, շատ մտա-
դիր հայեցումով մ'ըրած է նաեւ
ազգ. պատմութեան, զոր մինչև մեր
օրերը հասնեցած է՝ թուականներու
հշուրթեամբ և իրականացած ար-
հեստագործութեան վրայ
բաւական տեղեկութիւններ։

Մաքուր տպագրութեամբ 398
էջ պարունակող սոյն գիրքը, համե-
մատութեամբ շատ աժան է, 3 ֆը-
րանք գնով։ Կը ծախուի Վիեննայի
Միտքարեանց գրատնակաւոցն ի
քանակաւոր և ամեն ազգային գրա-
վաճառաց քով։

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՊԱՏՄՈՒԹԻԻՆ
ԱՐԵՒԵԼԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ
Թարգմանեալ ի Գաղղիականէն

Վերջին տաճկա—ուսական պա-
տերազմին վրայով գաղղիներէն լեզ-
ւաւն մէջ մէկ քանի տարբեր հեղի-
նակութեամբ հրատարակուած գոր-
ծերէն ամենէն անկողմնակալն ու
հշտապատուաւն Ս. Լ. Պոլսի երկն
բլլայով սորա հայերէն թարգմանու-
թիւնը տեսար առ տեսար սկըսած է
հրատարակուիլ, Արամեան տպագ-
րութեամբ, մաքուր թղթի վրայ,
մեծադիր և քառաձաղ իւրաքանչիւր
տետրը 2 պատկերօք զարդարեալ։
Սոյն հրատարակութիւնը խօստ
հետաքրքրական եւ միանգամայն
օգտակար գործ մը ըլլալով, կը հը-
րաւերուի յարգոյ հասարակութիւնը
մէկ մէկ օրինակ ունենալու անկէ,
որով թարգմանչին աշխատութիւնն
ու խնամքն արդիւնաւորեալն ալ
պատճառ մը կը կրայ։
Ա. տետրը հրատարակուած է
ցով. 28 ինչ կեդրոնատեղին է Ֆը-
րէնկեան գրատունը. զին թերթին
1 զրը արծաթ։

ԸՆԴԱՐԱՋԱԿ

ԱՌՈՂՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Ի ՊԵՏՍ

Հոգն Հայալէկ Այն-Յոյ

Արանց, կանանց, ծերոց
տղայոց, օրիորդաց և նորածին
կրտսեայից

Կ'ծախուի բոլոր հայ գրա-
վաճառաց քով գին 3/4 մէճիտ

Լալով կ'ծախուի Եւէի-ճամի Զիլին-
կերէր ճատտէսի թիւ 2 Ս Ղու-
կասեան գրատունը և ուրիշ գրավա-
ճառաց քով։

Գին 1 ֆրանք

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
ՏԵՏԵԱՆ

ԺՈՂԵՑ ՊԱԼԱՍՄՈ
ԹԱՐԳԱՆԵՑ

ԿԱՐԱՊԵՏ ԻՆ. ԵԱԶԱԶԱՆ
Աղէտանդ Տիւմա Կաղղիացի
մեծանուն վրայաւորն գրէն ելած
սոյն գործին Յոր այն է վերջին հա-
տորն ալ Իւրիւրի Տէտէեան եղբարց
տպարանէն ի լոյս ընծայուելով Պոլս
հասած է։ Այս գեղեցիկ վէպին մէջ
ուր Լուի Ժիւի կեանքը վարքն ու
վախճանը նկարագրուած են, հետ
զհետէ կ'ընկալանան Վոլթհո եւ
Լուսո՝ անցնալ դարուն այն երգու-
միծ մարդիկը, թագուէ գիտութիւն-
ներ կ'ընդունին, Մասնաց օթեակ-
ները օտարին առջև կ'ըստուին։ Ա-
մեն կարգի և հասակի մարդ իւր
սիրած նիւթը հոն կ'ըտնէ և նոյն

Կը ծախուի Եւէի-ճամի Զիլին-
կերէր ճատտէսի թիւ 2 Ս Ղուկա-
սեան գրատունը և ուրիշ գրավա-
ճառաց քով։
Գին 2 ֆրանք 28 սնթ.

ԿԻՅԼՈՄ ԹԵԼԼ

ՈՂԵՐԳՈՒԹ. Ի ՀԻՆԴ ԱՐԱՐՍ

Թարգմանեաց գաղղիներէն

Սէյուի Ա. Կիւլ-Դիւի

ԱՆԴԱՄ

Քարտազարաց գիւններն

Արտաք. գործոց պաշտօնատան
որ ի Բ. Դուան

Շիւէր գերմանացի հայակաւոր
հեղինակին ընտիր գործերէն մին
եղող սոյն ողբերգութիւնը մէկ նոց
թղթարամի կը վաճառուի Վ. Յ.
Մարգարեանի գրատունը Մէրճան-
Չարը թիւ 57 և ամեն գրավաճա-
ռաց քով։

ՆՈՐ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ
ՅՕՐԻՆԵՑ Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

Բազմահմուտ Մամուրեան էֆ. ի
սոյն 140 երեսէ բաղկացեալ նոր
գործը որ իւր կատարելութեամբ կը
յուսամք թէ մուտ պիտի գտնէ բո-
լոր ազգ. վարժարանաց մէջ, Իւրի-
ւր Տէտէեան տպարանէն հասած ըլ-

ՇԱՐԳ

ՄՈՒՀԱՐԷՊԵՍԻ ՀԻՔԵԱՅԵՍԻ

Հեղինակութիւն

ՊԱՐԳԱՆ ՊԵՏԵ

Վսեմ. Վարդան Պէյի գրէն
ելած սոյն ընտիր պատմութիւնը զոր
մինչև հիմայ թէրճէմայր—էֆեօր
լրագրոյն մէջ մաս առ մաս կը հը-
րատարակուի, այս անգամ կրկին
սրբագրութեամբ թերթ առ թերթ
հրատարակուի սկսած է մաքուր
տպագրութեամբ, և որուն ութը ե-
րեսէ բաղկացեալ մէկ թերթը 2
իսուն փոյնոց և տասը թերթերէ
բաղկացեալ մէկ հատորը մէկ 20 ոց
թղթարամի կը ծախուի հետեւեալ
տեղերը։

Պոլս Լուի Եօնի Սուհի Պոլոս
աղայի խանութը, Պապը—Լիւ ճատ-
տէսի գրավաճառաց խանութները,
Բերայ Մեծ փողոց ծխալվածառաց
խանութները, Թարաւ—Պաշի ծխա-
վաճառ Անդրէաս աղայի կրպակը,
Թէ՛ Պոլոս և Թէ՛ Ղալաթիոյ լրագ-
րագրավաճառաց քով։

Ղալաթիա Ուր. 2 ֆետր.

ԸՆԴՀ. ՊԱՐՏ. ԱՐԺ.

Բաց	14.02
Դոց	14.09
Բարձր զին	14.16
Ցած զին	14.02
Թղթարամի բաց	441.10
Բարձր	441.30
ցած	439.20
Ժամը 11	440.20

Փոխ. 63ի	Ֆր. 070.00
» 65ի	» 082.00
» 69ի	» 080.00
» 73ի	» 069.00

Դանձատումն	24.00
Սօսիթէ Ժէնէրալ	4.22
Սօսիթէ Օթօման	3.00
Պանք տը Բոնաթ.	6.16
Բրէտի Ժէնէրալ	3.12
Թրամիլէյ	1.85
Բուժ. Երկաթուղի	51.50

ԸՆԹԵՐՑ ԴՐԱՄՈՑ

(Օ. Կ. 100 Կ. 100)	
Անգլ. սակի	109.30
Գաղղ.	87.12
Բօլ	89.09
Բարպոն արծաթ	16.20
» Թղթարամ	09.00
Բրլմից	51.12
Հինդոց	23.20
Մէթալիք	23.00
Ճերմակ մէճիւ	07.34
Պլինճ	184.20

ՄԻՆԱՍԵԱՆԻՆ ՄԱՂԱՋԱՆ

ԳՏԵՆՈՒԱՄ

ՈՒ

ՓԱՆԱՍԵ

Կոչուած ցաւի գեղը բոլորովին
բուսեղէններէ բաղադրուած ըլլալով
Թէ՛ ներսէն և Թէ՛ դուրսէն կը գոր-
ծածուի ու բազմաթիւ ցաւեր ու հի-
ւանդութիւններ շտապ կը բժշկէ,
ինչպէս որ վարձ յիշուած է։

Ամեն տեսակ Գոլի, Ըստմոք-
սի, մէլքի կամ Աղիքներու ցաւեր.
ու նաեւ Թանք, Քօլէրա և այլ ա-
մառուան հիւանդութիւններ ունե-
ցողները այս գեղէն խմելու են հե-
տեւեալ կերպով։ Կէս դաւաթ Լուրի
մէջ, զիր ապուրի մը զրգալէն աւելի
չաքար, վրան լեցուր անուշի գրգալ
մը Փանասէ աղէկ մը խաւնէ ու
խմէ։

Կոկորդի հիւանդութեանց, և
Առեցքի համար գեղը վերոյիշեալ
կերպով պատրաստէ ու ժամը կամ
երկու անուշի գրգալ այն բաղադ-
րութեան խմէ։ Տօղացաւի, Բիւնա-
թիւրմի, Ուղի ցաւի, Ստամոքսի ոկ
տեսակ տեսակ կեանքի ցաւերու հա-
մար դուրսէն ֆանասէ քսելով աղէ-
մը շինելու է։ Եւրայի ցաւի համար
քիչ մը բամպակ ֆանասէի մէջ
թաթխելով ցաւած ակուպին վրայ
դնելու է։

Ամեն տեսակ երրոր ցաւի մը հա-
մար դուրսէն ֆանասէ քիւլ հարկ
կըլլայ, և Թէ՛ քիչ մը ալ խմելու աւե-
լի շուտ բժշկութիւն կըլլայ։

Մարմնոյ սպորուած կամ ճմու-
ած տեղերը բժշկելու համար վրան-
գը պատահածին պէս ֆանասէին
վրան աղէկ մը լեցնելու է։ Ղալա-
կով և ն. կտրուած վերքերը բժշկե-
լու համար արեւը չըրած շուտով
մը վերքը կապելու և ցաւին վրայէն
ֆանասէ լեցնելու է մինչև որ Լաւ մը

Թրջի ֆանասէն նաեւ արեան շրջա-
նը նարագայնէ ու բոլոր բնութիւնը
կը զօրացնէ։

Այս գեղին օգտակարութեանը
վրայ երկարօ էն գրել աւելորդ կը
համարվի, գործածողները զայն
միշտ կը գոլին, ուղղող կրնայ ան-
ձամբ փորձել. գինն աժան է։ Կը
ծախուի Միւնստեան և Ընկերաց Ա-
մերիկեան վաճառատունը որ ի Ղա-
լաթիա կ. Պօլոս

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
ԵՐԱՐԱՐԱՆ ԿԵՍԱՐԱՐ
ԳՈՐԾ ՍՈՒԵՏՈՒՆՈՍԻ
ԹԻՐԷՆԵՅ Ե. Ս. Ս.

Սոյն պատմութեան երկրորդ-
ի վերջին հատորն ալ իզմիրի
Տէտէեան եղբարց տպարանէն
ի լոյս ընծայուելով, կ'ծախուի
Եւէի-ճամի Զիլինկերէր ճատ-
տէսի թիւ 2 Ս. Ղուկասեան
գրատունը, և ուրիշ գրավա-
ճառաց քով. Գին 1 ֆրանք 25
սնթիւմ։

ԲԱՆԱԼԻ

ՀԱՅԵՐԷՆ ԵԱՐԱԳՐՈՒԹԵԱՆ

ԳՐԵՑ

Դ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

Ահաւասիկ գեղեցիկ միտք մը
Մամուրեան էֆ. ի աշխատանքն ու
թեամբ մուտ գտնելով մայրենի լեզ-
ուի ուսման մէջ, կ'աւալնորդէ ա-
շակերտները շարադիր լինելու, չըս-
պասելով որ անոնք քերականութեան
տաղտկալի շրջանէն անցնին։

Այս գրքիցը Զմիւռնիոյ Տէտէ-
եան եղբարց տպարանէն ի լոյս ըն-
ծայուելով կը ծախուի Եւէի-ճամի
Զիլինկերէր ճատտէսի թիւ 2, Ս.
Ղուկասեան գրատունը և ուրիշ գր-
ավաճառաց քով։ Գին 50 սնթիւմ։

ՆՈՐ ՕՐԱՅՈՑՑ

1879

ԹՈՒԱԿԱՆԻ ՔՐԻՍՏՈՍԻ

Կ'ծախուի գին 20 փարա մէճիւ

ԸՆԴԱՐԱՋԱԿ ՕՐԱՅՈՑՑ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

1879

ԹՈՒԱԿԱՆԻ ՔՐԻՍՏՈՍԻ

Գին 40 փարա մէճիւ

Տրոփուի Զարդարեան

15 կենդանադիր պատկերներով
զարդարեալ սոյն ընդաճակ օրացոյցը
բաց ի բուն օրացոյցէն կ'պարունակէ
նաեւ վերջին Ռուսո—Տաճկական պա-
տերազմին համառօտ պատմութիւնը,
առողջապահական ամենակարեւոր
գիտելիքներ, բարոյական սկզբունք,
ներ, խայթման և այլադի գեղեր,
միասակար ճճիւնը շինելու կերպեր։
Առնցքից զատ ազգային նշանաւոր
բանաստեղծ Քամա Գաթիպայի
«Հայերու թաքը» վերնագրով մէկ
շնախարհիկ տոնանկորը։

Կ'ծախուի Զարդարեան վաճա-
ռատունը, Սուրբ Լամա փողոց,
Ալլը Էֆէնտի խանի գիմաց, թիւ
12 և գրավաճառաց քով։

ՏԵՐ ԵՒ ՊԱՏՄՈՒՆԱՏՈՒ

ՊՈՂՈՍ ԲԻՐԻՅՃԵԱՆ

Ղալաթիա Բերչէմպէ—Բա.

գոր Պաքըր փողոց թիւ 12.